գանվում իրանց դրացի Թուրքերից, որ ամբողջ տարի մի կամ չատ չատ երկու անգամ են լինում Աստուծու տանը և բնաւ ոչ մի հասկացողութիւն չունեն իրանց կրօնի վերաբերութեամբ։ Ազգային յատկութիւնների բացակայութիւնը կիլվարցիներում համեմատարար առաւել են նշմարվում, քան թէ խաչմագցիներում, որովհետև Կիլվար գիւղի բնակիչները, բնակվելով գաւառի լեռնային մասում և հեռու լինելով քաղաքից, սակաւ են ունենում միջոցներ յարաբերութիւն ունենալ քաղաքացիների հետ։ Շատերը սրանցից սափրում են իրանց գլուխները և չեն կատարում եկեղեցական ծէսերը. անձամբ ինձ յայտնի է, որ երկու կիլվարցիներ պահում են երկու երկու կին։ Ինչ անեն կիլվարցիները, որ նրանք օրինակ են վերցնում իրանց գիւղի լօթի քահանայից։ Այս վերջինը ոչ ժամատացութիւն է անում, ոչ պաս է պահում, ոչ հայերէն է խօսում (կիլվարցիները թաթարերէն են խօսում, այս լեզուն աղճատեալ պարսկերէնին նման է) և յայտնապէս երկու կին է պահում։ Ուրեմն ինչ պահանջել խեղճ ողորմելի գիւղացիներից, եթէ Աստուծու տան ներկայացուցիչը և քրիստոնէութեան բարոյականութեան քարոզողը այսպիսի ոգէտ և անբարոյական մարդ է։

Թէպէտ այս գիւղերում կան դպրոցներ, բայց չատ ախուր և ողորմելի դրութեան մէջ են գտնվում, հոգաբարձուների անտարբերութեան և անպատուութեան շնորհով։ Կիլվարի դպրոցը ստանում է Բագուի Մարդասիրական ընկերութիւնից 350 բուբլ և 50 բուբուց աւելի ուղարկում են զանազան քաղաքներից. այս 400 ր. տարեկան եկամուտից դպրոցի համար ծախսվում է գուցէ ոչ աւելի քան 200 ր., 180 ր. վարժապետին և 20 ր. մանր ծախս։ Իսկ մընացեալ 200 ր. ուր է գնում, ոչ ոք ոչինչ չէ իմանում, բացի պ. հոգաբարձուից։ Խաչմագ եիւղի դպրոցը Բագուի Մարդ. ընկ. ստանում է 100 բուբլի. բացի այս ընկ. օժանդակութիւնից ունի ևս 75 բուբլ իր հազար բուբլ մայր գումարի տոկոսը, որը ընծայել է շուշեցի պ. Ալեքսանովը։ Խաչմագի դպրոցի վարժապետը մի ծոյլ քահանայ է։ Այս դպրոցը 9 ամիս փակ էր։ Ցիմայ դպրոցը բաց է ու վարժապետութիւն մի և նոյն ծոյլ քահանան է անում։ Ինչ և իցէ. այս դպրոցը առաւել ևս լաւ և ծաղկեալ դրութեան մէջ կը լինէր, եթէ միայն պ. Պետրոս բէկ Ղազարովը, գիւղի իշխանը ցանկանար այդ։ Ինչպէս տեսնում է ընթերցողը այս դպրոցները թէպէտ ապահովված են նիւթական կողմից, իսկ կրթողական վերաբերութեամբ չատ թոյլ են։ Ահա քանի տարի է որ այս գիւղերում կան դպրոցներ, բայց մինչև այժմ այս գիւղերի ոչ մինում դուք չէք գտնի մի երեխայ, որ գիտենար հայերէն խօսել։ Եւ զարմանալու ոչինչ չը կայ։ Բացի նրանից, որ այս դպրոցները գտանվում են այսպիսի ողորմելի դրութեան մէջ, նրանք ոչ մի ժամանակ չեն կարող բերել էական օգուտ։ Երբէք բարեգործների աշխատութիւնը չի բերի լաւ պտուղ, մինչդեռ օրիորդների կրթութիւնը բարձի թողի կառնվի հոգաբարձուներից։ Նոր սերունդի պատրաստութիւնը այնպիսի գիւղերում, ուր չեն խօսում մայրենի լեզուով, բնականապէս պէտք է գնայ գուգահեռապէս երկու սեռերի վերաբերութեամբ, ուսուցանելով ինչպէս տղաներին, նոյնպէս էլ օրիորդներին։

Հակառակ դիպուածքում, մանուկը, որը դպրոցում չատ լաւ էր խօսում ու կարդում հայերէն, դպրոցից դուրս գալուց յետոյ, իսկոյն մոռանում է, այն ինչ որ սովորել էր այնտեղ. պատճառը մայրը, քոյրը նրա հետ թաթարերէն կամ թուրքերէն են խօսում։ Ուրեմն ակներև է, որ առանց օրիորդների կրթութեան, առանց մայրերի պատրաստելը այս առաջին և ամենագլխաւոր մանկավարժների տղայոց դպրոցը չէ կարող պատրաստել մի հիմք լուսաւորութիւնը ժողովրդի մէջ հաստատուն մուծանելու համար։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 29 մայիսի

Հայոց խնդրոյն լուծման մասնաւորապէս նրպատեալու յատկացած և Եւրոպա հրատարակելի մի լրագրոյ հաստատութիւն, անտարակոյս, չատ օգտաւէտ հետևանք կը խուստանայ։

Ձեր այսօրվան համարին մէջ այդ մասին հրատարակած տողերն՝ ըստ ինձ, ոչ մի հայ չէ կարող առանց համակրութեան կարդալ։

Այսպիսի ազնիւ մտքեր յղացող անձինք, անշուշտ, իրենց վարձատրութիւնը բուն իսկ գործին յաջողութենէն կը սպասեն, բայց և այնպէս իբրև հայ, չեմ կարող չը յայտնել ձեզ իմ խորին շնորհակալութիւնքս և խնդրել որ բարեհաճէք նկատել զիս, այժմէն բաժանորդ, եթէ երբեմն ձեր ազգօգուտ առաջարկութիւնը իրականութիւնը գտնայ։

Զ. Տէմիրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճել է հաւանութիւն տալ Թիֆլիսի ընդհանուր ուսուցչական ժողովի կայանալուն, պարտաւորեցնելով քաղաքային իւրաքանչիր եկեղեցուն վերոյիշեալ ժողովի անհրաժեշտ ծախսերի համար վճարել 20 բուբլի, իսկ գիւղական ամեն մի եկեղեցուն 5 բուբլ։

—

Մի երիտասարդ խնդրում է մեզ յայտնել, որ պատրաստում է երեխաներին զինուորական դրպրոցի և բէալական գիմնազիայի բոլոր դասարանները մտնելու։ Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատան մէջ։

—

Շնորհակալութեամբ ստացանք Շուշու մէջ տպված, պ. Տ. Նազարեանցից թարգմանած և հրատարակված գրքոյկը «Պողնանի ուսուցչի օրագրից» հեղինակութիւն Լիտվօսի։ Այդ պատումը մենք առաջ կարդացինք «Вѣстникъ Европы» ամսագրի մէջ և խորհուրդ ենք տալիս մեր ընթերցողներին կարդալ այդ վերին աստիճանի հետաքրքիր և օգտաւէտ գրքոյկը, որ այժմ հայերէն թարգմանութեամբ ընծայում է հայոց հասարակութեանը պ. Տ. Նազարեանց։ Թարգմանիչը իրաւունք ունէր նուիրել իր աշխատանքը հայ ծնողներին և դաստիարակներին. թող կարդան և հասկանան թէ ինչպէս դպրոցը կարող է մեռցնել երեխային։ Գրքոյկի գինը 20 կոպէկ է։

—

«Кавказскій Курьеръ» լրագրում կարդում ենք հետեւեալը։ «Հաղորդում են, որպէս հաստատ լուր, որ հայոց կաթողիկոս Գէորգ IV չատ վտանգաւոր և անյուսալի կերպով հիւանդ է։ Խորհուրդ ենք տալիս Թիֆլիսի հայոց հասարակութեան ներկայացուցիչներին հաւաստիանալ այդ տխրալի լուրի ճշդութեան մասին, որպէս զի վաղօրօք ուղարկվի էջմիածին մի պատգամաւորութիւն ազգային սեփականութիւնը ամեն պատահարներից ապահովելու համար։ Հայոց կաթողիկոսանիստ վանքի մէջ հոչակաւոր Մանկունու ներկայութիւնը այդ նպատակի համար բաւական չէ։» Ռուս յարգելի լրագրի հաղորդած լուրին մենք էլ աւելացնում ենք մեր կողմից Թիֆլիսի հասարակութեանը ուղղված մի հրաւէր, ինչպէս Մատթէոս կաթողիկոսի ժամանակ է եղել, շուտով ուղարկել մի պատգամաւորութիւն էջմիածին ազգային գանձը որ և է վտանգից ապահովելու համար։

—

Մայիսի 29-ին թիւրքաց Հայաստանից վերադարձած պ. Թոխմախեանը կարդաց Արծրունու թատրոնում իր դասախօսութիւնը «Թիւրքաց Հայաստանի մասին»։ Դուցէ կասեն որ Թոխմախեանի դասախօսութիւնը չատ մեծ սիստեմա չունէր, բայց անտարակոյս նա չատ հարուստ էր նոր և հետաքրքիր տեղեկութիւններով թիւրքաց Հայաստանի մասին։ Եւ այդ պատճառով չատ ցաւալի է որ ժողովուրդը քիչ էր հաւաքվել նրան լսելու համար։ Մեր ինտելիգէնցիան, որին աւելորդ չէր լինի քիչ թէ չատ ուսումնասիրել այն երկիրը, որին նա բարոյապէս օգնել է ուզում,—բացակայ էր։ Լսողների մեծ մասը հասարակութեան միջին և մասամբ ստորին դասին էին պատկանում։ Պ. Թոխմախեանը բաժանեց իր հրապարակախօսութիւնը երկու մասի վրա, որոնցից առաջին փաստական էր, իսկ երկրորդը բաղկանում էր ընդհանուր դատողութիւններից։ Ճիշտ թւանշանների վրա հիմնվելով, պարոնը ցոյց տուեց մեզ որ Վանի նահանգում հայերը մեծամասնութիւն են կազմում, որ այդ տարրի ձեռքումն է երկրի առուտուրը, արուեստները և առհասարակ տնտեսական կեանքը։ Դասախօսը ցոյց տուեց մեզ նմուշների մի հարուստ ժողովածու Հայաստանի գործուածքների։ Թոխմախեանը այն միտքը յայտնեց որ Հայոց ազգութեան նեցուկը ոչ կրօնն է, ոչ էլ հայոց ինտելիգէնցիան, այլ հայ գիւղական դասակարգն է, որ չը նայելով բոլոր տառապանքներին, կապված է մնացել հայոց հողին, հաւատարիմ է մնացել հայրենիքին, այն ինչ ամբողջ արիստոկրատիան գաղթել է Հայաստանից և յետոյ անհետացել, ջնջվել է։ Դասախօսը այն համոզմունքի է որ չատ հեշտ կը լինէր կապ հաստատել հայերի, քիւրդերի և ասորիների մէջ։

—

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան տարեկան ժողովը, որ նշանակված էր մայիսի 31-ին, նախագահի և փոխ-նախագահի Թիֆլիսից հեռանալու պատճառով յետաձգվում է մինչև 7 յունիսի, 12½, իսկ վարչութեան ժողովը լինելու է յունիսի 5-ին, 7 ժամին երեկոյեան։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Չը նայելով որ եղանակը չափազանց հով է անցնում, այնուամենայնիւ երևանցիները պատրաստվում են Դարաչիչաղ գնալու։ Այն օրից երբ սովորութիւն է դարձած Երևանի դատաստանատները և վարչութեան հիմնարկութիւնները փոխադրել ամարանոց, մինչև այսօր, պաշտօնական տեղեկութեանց նայելով, մօտաւորապէս 200,000 բուբլ փող է ծախսվել Դարաչիչաղի վրա։ Եթէ այդ գումարը ծախսվէր նոյն իսկ Երևանի այլ և այլ բարեկարգութեանց վրա, այժմ Երևանը մի եւրոպական քաղաքի կը նմանէր։ Բայց ով է մտածում այդ հաշիւների վրա։»

—

Երևանից մեզ գրում են։ «Մեր նահանգապետ պ. Շալիկով գնաց Թիֆլիս։ Ոմանք ասում են որ Երևանի նահանգի կալուածական խնդրի վճռելուն մասնակցելու համար է գնացել, իսկ ոմանք պնդում են, որ այլ ևս չի վերադառնայ Երևան։»

—

Մեզ հաղորդում են Երևանից որ մայիսի 24-ին Գայիանեան դպրոցի դահլիճում վիճակախաղ էր յօգուտ դպրոցի։ Մեծ բազմութիւն կար։ Որքան արդիւնք գոյացաւ վիճակախաղից,—թղթակիցը չը գիտէ։ Նոյն օրը երեկոյեան թատրոնական ներկայացումն կար նոյն դահլիճում։ Խաղում էին «Թուղթ խաղացողի կեանքը». թատրոնը դատարկ էր, և երևանցիք այդ ժամանակ իրանց տներում և կլուբում նստած թուղթ էին խաղում։ Պ. Ա. Մելեանց կարդաց մի բանաստեղծութիւն։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են, որ մայիսի 12-ին այդ քաղաքի կլուբի դահլիճում թատրոնական ներկայացումն տուեց պ. Օսիպովի ռուս թատրոնական խումբը։ Խաղացին 1) Картины съ натуры, сцены изъ военной жизни, 2) Вспышка у домашняго очага, 3) Хочу быть актеромъ. Ներկայացումը լաւ անցաւ, բայց ժողովուրդը սակաւ էր։ Մայիսի 13-ին խումբը ճանապարհորդեց դէպի Ղուսար։

—

Ղուբայից մեզ գրում են։ «Մեր գաւառի անտառապետը և նրա օգնականը բարեխղճաբար են վարում իրանց պաշտօնները, բայց օրցեզդչիկները հարստահարում են ժողովուրդը։ Պ. անտառապետի ուշադրութիւն ենք դարձնում իր այդ ծառայողների անիրաւութիւնների վրա։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՑՈՑ

—

Ահաւասիկ ընկերութեան Ընդհանուր ժողովոյ Նախագահ Տ. Ա. Ալթուն Տիւրրիի ճառին պատճէնը։

Ներեցէք, Տեարք, որ ինձ համար խիստ քաղցր պարտաւորութիւն մը կատարեմ, ներկայելով Ձեզ իմ շնորհապարտ զգացումը ներս այն բարձր վստահութեան համար, որով հաճեցաք պատուել զիս ի վեր քան զարժանիս, յանձնելով ինձ կենդրոնական ժողովոյդ նախագահութեան պաշտօնը։

Տեա՛ր, այդպիսի մի փափուկ պաշտօնի նկատմամբ իմ անձեռնհասութեան գիտակցութեամբս հանդերձ զայն ստանձնել, մանաւանդ ներկայ պարագայից մէջ և իմ անձնական բազմաղիմի գբաղմանցս միջոցին, արդարև յանդգնութիւն մ'էր, սակայն հնա՞ր էր վարանիլ ձեր միահամուռ քուէից և այնքան համակրանօք յայտնուած ձեր բարձր կամաց առջև։ Վստահ եմ, Տեարք, որ ձեր ներողամտութեան ոգին և թանկագին աջակցութիւնը մեծապէս պիտի դիւրացնեն ինձ, պաշտօնիս բնութեան իմ վերայ դրած պարտաւորութիւնքը խղճի մտօք կատարել։

Սոյն առթիւ Տեարք, ներեցէ՛ք նաև որ երկու խօսք ալ ընկերութեան վիճակին և ընթացից վրայ ընեմ։

Ամենամեծ խորհուրդները մեծ արժէք չունին, եթէ գաղափարաց սահմանէն ելնելով չեն իրականանար։

Այդ մեծ խորհուրդներէն մին էր անշուշտ ազգին մէջ կրթութիւն ծաւալելու խորհուրդը, որ շատ ազգասէր գլուխներ գրաղեցուցած և հոգնեցուցած էր ի բազմաց հետէ, առանց մեծ արդիւնք մը արտադրելու։ Հայ ժողովուրդ մը կար որ կը զգար թէ կրթութեան պէտք ունի, բայց կրթուելու միջոց չունէր։ Հայեր կային որ պատրաստ էին օգնութեան ձեռն կարկառել, բայց չը կար մարմին մը որ միջնորդ կանգնէր ժողովրդեան և իւր բարեկամաց մէջ։ Այդ մեծ խորհրդին, այդ բարձր միջնորդութեան պատշաճաւոր մարմին տալու փառքը հայ երիտասարդութեան վերապահեալ էր։ Երեք չորս տարի առաջ եռանդուն երիտասարդաց մի քանի խմբեր անյողդողդ հաստատամտութեամբ և անդուլ ջանիւք այդ մեծ խորհուրդն երեք տարբեր մարմիններու միջոցաւ ներկայեցին աշխարհի, անոնց իւրաքանչիւրը ժամանակ մի առանձին ապրեցաւ, գործեց և իւր արդեամբքը փայլեցաւ, սակայն յետոյ զգալով թէ միութեամբ աւելի գօրանալով կարող պիտի լինէին իրենց նուիրական նպատակն ըստ արժանւոյն արդիւնաւորելու, այդ երեք մարմիններն յօժարակամ մի ձուլուեցան և ծագում տուին ներկայ Միացեալ Ընկերութեան, որոյ համար չափազանցութիւն չեմ համարիր ըսել թէ ամեն Հայ սրտերու սիրոյ առարկայն է և ամբողջ հայութեան պարծանքը։ Այս գործը ձերն է, Տեա՛ր, և ընդհանուր համակրութեամբ ողջունեցաւ ոչ միայն հայ հասարակութիւնն՝ այլ և օտարներէ։ Թէ իւր այսօրուան վիճակը քանի՞ երկանց և ուրախի անձնուիրութեանց և զոհողութեանց արդիւնք է, յայտնի է։ Այսօր երեք հազարէն աւելի հայ մանկունք իւր հաստատած 27 դպրոցներու մէջ կրթութիւն կը ստանան, սուղ միջոցի մէջ այսպիսի հսկայ արդիւնք մը, Տեա՛ր, արդարև մեր հիացման արժանի է. և թէպէտ միւս կողմանէ ընկերութեան ունեցած նիւթական միջոցներուն հետ բաղդատելով իւր բազմաձաւալ ձեռնարկութիւնները յանդգնութեան գործ մը համարել կարելի է, սակայն հարկ է խոստովանիլ թէ այդ յանդգնութիւնն ալ իւր վսեմ կողմն ունի։

Գործի մը լաւ սկզբնաւորութիւնը՝ նորա յաջողութեան պայմաններէն մին է, բայց միակ պայմանը չէ. եթէ գէշ սկսուած գործ մը յարատեւութիւն չունենայ, ոչ ոք մեծ ցաւ կը զգայ, բայց երբ լաւ սկսուած գործ մը ջանից և գաղափարաց միութեան պակասութենէն կը խանգարի և կը մեռնի, այնչափ աւելի ցաւ կը պատճառէ ամեն ազգասէր սրտերու, որչափ որ մեծ էին անոր ծննդեան առթած բերկրութիւնն ու քաղցր յոյսերը։

Տեա՛ր Երեսփոխանք, մեր ամենուս վրայ

պարտք մը կայ—այն է վառ պահել միշտ մեր սրտերուն մէջ այն հուրը, որ ծնունդ տուած է Ընկերութեանս, և ամրապնդել գաղափարաց այն միութիւնն՝ որ գլխաւոր պայմանն է այս մեծ և բեղմնաւոր գործին յարատեւութեան։ Մանաւանդ այսօր, Տեարք, առաւել քան երբէք պէտք ունիմք միութեան և համաձայն գործակցութեան։ արդէն ձեր Գործադիր Մարմնոյն Պետը պիտի բացատրէ ձեզ թէ Ընկերութեանս նիւթական վիճակն անբաւական է դժբաղդաբար իւր բազմաթիւ հաստատութեանց պահանջած միջոցներն ապահովելու և ապագային համար ալ վտանգ իսկ կը սպառնայ Ընկերութեանս գոյութեանը, եթէ այժմէն փութով դարման չը տարուի։ Այսպիսի ծանր կացութեան մ՚առջև, Տեա՛ր, նոր կորովի, նոր զօրութեան պէտք ունիմք, առանց երբէք վհատելու, միասիրտ, միահոգի աշխատելու եմք Ընկերութեանս նիւթական վիճակը զարգացնելու և զայն գտնէ իւր պիտոյից համապատասխան դիրքի մէջ բարձրացնելու։ Արդարև, Տեա՛ր, երկրին հանգամանքներն՝ ինչպէս և ներկայ պարագայներն յոյժ անբաստ են այս միջոցին. սակայն մեր առջև մեր հաստատիչ կարևորագոյն մի աղբիւրը կայ, որ զրեթէ կոյս մնացած է. խօսքս բաժանորդագրութեան համար է, և երբ կիմանամք թէ սաորագրեալ բաժիններու թիւն հազիւ 4,000 է, դիւրին է ըմբռնել թէ ո՞րքան բարձի թոզի մնացած է հասոյթի այդ մեծ և փրկարար աղբիւրը. ուստի և ժամէ որ ադոր հարկ եղած ցժն ու մղումը տալով, Ընկերութեանս ապագան ապահովենք. ասոր համար մէն մի ընկեր իւր կարողութեան չափովը պէտք է աշխատի այս բաժանորդագրութեան գործն ընդհանրացնելու, և այս բանին համար ոչ միայն ընկերաց դիմելու ենք, այլ և ամեն կարող ազգային անհատի, զի Ընկերութեանս իսկ ձեռներն հայոց ազգին իսկ ձեռներն են, տիեզերական են և նոյն իսկ դարուս ոգւոյն պահանջումն են, սիրելի է ինձ յուսալ թէ ձեր անխոնջ ջանից մէջ լիուլի պիտի յաջողիք։ Այո՛, Տեա՛ր, հարկ չունիմ արդէն ազգասիրական ոգւով փառեալ ձեր սրտերուն յորդոր և քաջալերը կարդալու. դուք ինքնին համոզուած էք անշուշտ որ ձեր այս նուիրական առաքելութեան մէջ սակաւ ուրեք անտարբեր սըրտերու պիտի հանդիպիք. ամեն հայ, որ տակաւին անմահն և անհաղորդ մնացած է ձեր ազգօգուտ ձեռնարկէն, իւր բաժինը պիտի փութայ սիրով նուիրել ձեզ, երբ դիմէք իրեն. այս մասին իմ համոզումս այնչափ յառաջ կերթայ, որ մինչև իսկ հաւատ ունիմ թէ, ինչպէս մահճին մէջ սառապեալ ծերունին, այնպէս ալ զրկանին մէջ խայտացող մանկիկը իւր բաժինը չը պիտի գլանան ձեզ, և անգին երբ մեծաւունն իւր ձոխ գանձէն առատ նուէրներ պարգևէ, տնանկ մուրացիկն ալ իւր լուսայն սիրով պիտի բերէ ձեզ։ Այո՛ ըսածներուս միակ պայմանը, Տեարք, հասարակաց փառահութիւնն է և զայդ ազգելն ալ մեր գործերէն կախումն ունի։ Հետևաբար, Տեարք, դարձեալ կըսեմ, միասիրտ և միահոգի գործեմք և հաստատապէս գիտնանք թէ յայնժամ, բայց յայնժամ միայն Ազգն ընդ մեզ է յաւէտ։

(Մասիս)

ԹԻՒՐՔԻԱ

—

„Times“ լրագրին Կ. Պոլսից հեռագրում են մայիսի 25-ից։ Սուլթանը նորից վճռել է հրապարակական դատաստանի ենթարկել այն բոլոր անձանց, որոնք մեղադրվում են սուլթան Աբդուլ-Ազիզի սպանման մէջ։ Որքան հրապարակապէս կատարվի դատաստանը, այնքան լաւ է թէ սուլթանի և թէ արդարութեան գործի համար, որովհետև մինչև այժմ շատերը պնդում են, որ սուլթանի սպանութիւնը կատարեալապէս անհիմն և հնարված է, չը նայելով Նուրի-փաշայի խոստովանութեանը։ Այդպէս են մտածում ոչ թէ մեղադրվածների կուսակից մարդիկ, այլ մինչև անգամ գործին մասնակցողներ անձինք։ Սրանց կարծիքով սկզբնական քննութիւնը կատարված է ամենանկռնօն կերպով և մեղադրվածներին ստիպել են խոստովանել, նրանց տանջանքների ենթարկելով։ Մեղադրվածները հասարակ բանտի մէջ չէին պահվում, այլ պալատի մէջ, իսկ քննութիւնը կատարվում էր գաղտնի, սուլթանի անմիջական մասնակցութեամբ, որ այդ գործով չափազանց հետաքրքրված է։ Մեղադրվածներից մի քանիսին հարցրել են սուլթանի ներկայութեամբ և նորերում Ֆահրի-բէյ նորից այդ վիճակին է ենթարկվել։ Մի քանի վերկաներ ցոյց են տուել, որ սպանութեան ժամանակ Ֆահրի-բէյ հսկում էր սուլթանի դռների մօտ։ Նա թողել մարդասպաններին մտնել սուլթանի սենեակը և ինքն էլ այնտեղ գնալով մասնակցել սպանութեանը։ Վկաներից մէկը, որին այդ հանգամանքի մասին հարցրին սուլթանի ներկայութեամբ, լռում էր բոլոր ժամանակ և, երբ նրան նկատեցին, թէ նրա լռութիւնը նրան մեղադրում է, վկան միայն իր ուսերը բարձրացրեց։ Քննութիւնը մեծ դժուարութեան հանդիպեցաւ տեղական և օտար բժիշկներին հարցնելու ժամանակ։ Բժիշկները ասում են, որ սուլթանի մարմնի վրա բռնութեան նշաններ չէին երևում, բացի մկրատով կարած երակը, մինչդեռ վկաներից շատերը ասում են, թէ մայոր Ալի-բէյ, կամենալով շուտ սպանել սուլթանին, որով կամ դաշոյնով նրան վտանգաւոր վերք հասցրեց։

Կ. Պոլսից „Polit. Corresp.“ լրագրին գրում են, որ Բ. Դուռը երբէք չէ կամեցել ճանաչել Ալժիրիայի նուաճելը Ֆրանսիայի կողմից։ Նա միշտ հրաժարվել է Ալժիրիայի մէջ թիւրքաց հիւպատոս նշանակել։ Թիւրքաց կառավարութեան կարծիքով, Ալժիրիան Թիւրքիայի մի նահանգ է, որ միայն ժամանակաւորապէս զրաւած է Ֆրանսիական զօրքերով։ Դրա համար Ֆրանսիան վրէժխնդիր եղաւ, չը ճանաչելով սուլթանի Ֆիրմանը Տունիսի վերաբերութեամբ։ Այդպիսով Բ. Դուռը իր յամառութեամբ ինքը ստեղծեց այժմեան դժուարութիւնները։ Ինչ կը վերաբերի Տունիսի բէյին, նա դեռ 1870 թուականին ուղարկեց Կ. Պոլիս Խէյրեդին-փաշային, որ պէտք է բողոքէր սուլթանի ցանկացած գերիշխանութեան դէմ Տունիսի վրա։ Այսպէս էր դարձերի դրութիւնը, երբ սկսվեցաւ ռուս-թիւրքական պատերազմը, որի ժամանակ Տունիսի բէյ հրաժարվեցաւ սուլթանին օգնական զօրքեր ուղարկել։ Թէ Բ. Դուռը և թէ Տունիսի բէյը այժմ հնձում են այն, ինչ որ ցանել են։ Ֆրանսիան երբէք չի հրաժարվի իր սկսած գործից։ Նա վճռել է գերիշխանութիւն ունենալ Տունիսի վրա և երբէք այդ վճիռը չի փոխի, թէպէտ առաջին ժամանակներում գերիշխանութիւն բառը գործ չի դնի։ Տեսնելով, որ Թիւրքիայի իշխանութիւնը առհասարակ կասկածելի է դառնում, Թիւրքերը վճռեցին պատերազմական նաւատորմ ուղարկել Տունիս։ Ֆրանսիական դեսպանը յայտնեց Ասիմ-փաշային, որ Ֆրանսիացիները թընդանօթների կրակով կընդունեն Թիւրքաց նաւերին, եթէ նրանք կը համարձակվին երևալ Տունիսի առաջ։ Ասիմ-փաշա լսեց այդ յայտնութիւնը և ոչինչ չը պատասխանեց։ Ցայսմիկ է միայն, որ սուլթանը երբէք և ոչինչ բանով այդքան չէ բարկացել, որքան Տիսօի յայտնութենից յետոյ։ Այժմ պատերազմական նաւատորմը Տրիպոլիս կուղարկվի, որովհետև Թիւրքերի և Ֆրանսիացիների կռիւը վտանգաւոր է Բ. Դրան համար և բացի այդ պէտք է առժամանակ դիպլոմատիական ճանապարհով գործել սուլթանի հեղինակութիւնը վերականգնելու և նրա պահանջներին որ և է նշանակութիւն տալու համար։ Առ այժմ Թիւրքաց ծովային վարչութիւնը հրաման է ստացել մի նաւատորմ պատրաստել Միջերկրական ծովը ուղարկելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Էյյաների ընկերութեան» Թէհրանից հեռագրում են, մայիսի 31-ին հետևեալը «Այստեղ եկան Թիւրքիայի և Ռուսաստանի դեսպանները, որոնք չատ լաւ ընդունվեցան շահից։ Թիւրքաց դեսպանը նորին մեծութեան հաւատացրեց, որ սուլթանը հրամայել է առաջն առնել չէյխ Ի-բրագուլլահի կողմից լինելի նոր յարձակմունքներին։ Լուրեր են տարածվել, որ թիւրքերը վանայ լճի մօտ են հաւաքվում։ Պարսկական զօրքերը, որոնք մայիսի վերջին Թէհրանից դուրս եկան, հասան Ուրմիա և կը բնակվեն Մերդավիրեան բանակում։ Այդտեղ գնալու է չուտով Մի նեխ-Սալար-Ազէմ։ Մուստաֆի-էլ-Մեմալէկ-աղա մինիստրների խորհրդի նախագահ է նշանակված։

—«Էյյաների ընկերութեանը» Կ. Պոլսից հեռագրում են, մայիսի 31-ից հետևեալը. «Միթհադ-փաշան, ցուցումներ տալով իր մասնակցութեան մասին Աբդուլ-Ազիզի սպանման գործի մէջ, այս օրերս տեղափոխված է մի ուրիշ բնակարան, որտեղ կերակրում են նրան սուլթանի հաշիվ։ Նորին մեծութիւնը, բացի դրանից մի մուշտակ ընծայեց նրան և առհասարակ բարի աչքով է դէպի նա։ Միթհադ-փաշան հեռագրով իր ընտանիքին իմաց տուեց Զմիւռնիայում, որ ինքն բաւական է թէ բնակարանով և թէ ուօճկով, և որ չատ լաւ են վարվում իր հետ։

—Վիէննայի «Polit. Corresp.» լրագիրը յունիսի 1-ից Կ. Պոլսի միջով լուր ստացաւ, որ սուլթան Աբդուլ-Համիդ Մեքքա սրբազան քաղաքում մեծ աջողութիւն ունեցաւ։ Սուլթան Սելիմ I-ի թագաւորութեան ժամանակից, Մեքքայում թիւրքաց դրօշակ չէր ծածանվում։ Այնտեղի զօրքերի հրամանատար Նէջիբ-փաշային աջողվեց Էմիր-չէրիֆ Աբդուլ-Մուտալիբին համաձայնեցնել, որ սրանից յետոյ քաղաքային երեք ամրոցների և հրապարակական շինութիւնների վրա ուրբաթ և ուրբան օրերին բարձրացրած լինի թիւրքաց դրօշակը։ Առաջին անգամ այդ գործողութիւնը չատ հանդիսաւոր կերպով կատարվեցաւ, ներկայութեամբ չէրիֆի, մարգարէի ընտանիքի անդամների, ուլէմների, նշանաւոր անձերի և տեղային իշխանութիւնների։ Դաս քան դրօշակի բարձրացնելը աղօթք կարդացվեցաւ Աբդուլ-Համիդ խալիֆի բարեյաջողութեան համար։ Արաբիայի գործերի դրութեան մասին այն բազմաթիւ թղթակցութիւնները, որոնք տպվեցան եւրոպական լրագիրներում, Էմիր-չէրիֆ Աբդուլ-Մուտալիբի անբաւականութիւնը գրգռեցին։ Իմանալու համար, թէ ով է այդ թղթակցութիւնները գրել, նա հրամայեց բոլոր կասկածելի նամակները փոստայում բաց անել։ Այդպիսի միջոցով նա կարողացաւ մի քանի թղթակիցների անունները իմանալ, որոնք յետոյ կանչվեցան քննութեան ենթարկվելու համար։

—«Temps» լրագիրը հաղորդում է, որ Բէյից Տունիսում հեռագիր է ստացվել, որից յայտնվում է, որ «Télégraphe» լրագրի խմբագիր Սէգուինի վրա արաբներ յարձակվեցան հէնց քաղաքի մօտ, և սկսեցին քարեր արձակել նրա վրա։ Երբ նա զանակ հանեց պաշտպանվելու համար, ուաղակները թշուառականի ձեռքից դանակը խլեցին և սպանեցին նրան մի քանի հարուածներով։ Մարդասպանները կալանաւորված են։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս երդուեալների դատարանը փարիզում քննում էր սրմնագիր Լակրուայի գործը, որը երեք ամիս առաջ խածելով կտրեց իր ընկեր Կոնստանի քիթը։ Դատաւորների առաջ, սեղանի վրա, դրած էր ապակեայ չլէյի մէջ գեղձի կտորը. որպէս իրական ապացոյց։ Դատարանին ներկայացաւ Ֆլասվոզը. ներկայ եղողները անհամբերութեամբ սպասում էին տեսնել թշուառ զոհին և արդէն առաջուց սարսափից դողում էին։ Նրանց զարմանքին չափ չը կար, երբ սեղանին մօտեցաւ մէկ առողջ և կարմրադէմ երիտասարդ և պատմեց իր հետ պատահած բռնաբարութիւնը։ Հասարակութիւնը իր աչքերին չէր հաւատում. Ֆլասվոզի դէմքի մէջ տեղը բարձրանում էր քիթ, իսկական քիթ։ Լակրուան կամենում էր զրկել իր թշնամուն այդ անհրաժեշտ զարդարանքից, բայց բնութիւնը, որը երբեմն մարդկերանցից աւելի բարի է, նրան նոր քիթ ընծայեց, այնպէս որ այժմ Կոնստան երկու քիթ ունի. մէկը գտնվում է իր տեղում, իսկ միւսը սպիրտի մէջ, դատարանի սեղանի վրա։ Բայց բնութեան մեծահոգութիւնը չէ փոքրացնում մեղադրվածի յանցանքը. երդուեալները մէկ տարվայ բանտարկութեան դատապարտեցին նրան։ Կոնստան հեռացաւ դատարանի դահլիճից, չատ բաւական լինելով նրանով, որ ինքն գիտնական ֆենոմեն դարձաւ։

* * *

Պեշտի բարձրագոյն դատարանում եկող շաբթին կը քննվին 35 խնդիրներ ապահարզանի մասին։ Այդ խնդիրներից միայն տասը տղամարդկանց տուածն է, իսկ մնացած բոլոր խնդիրները կանանց են պատկանում։

* * *

Այս օրերս, հէնց Վատիկանի մօտ, բնակութիւն կը հաստատեն նոր անձինք, որոնց հարեւանութիւնը հազիւ թէ ախորժելի լինի կաթոլիկական եկեղեցու գլխին։ Եգիպտոսի նախկին խէդիվը դիտաւորութիւն ունի իր հարեմով Նէապոլից Հռոմ տեղափոխվել։ Նա թոյլատրութիւն էր խնդրում սուլթանից Զմիւռնիա բնակվել, բայց մերժվեցաւ նրա խնդիրքը։ Այժմ նա բանակցութիւններ սկսեց Հռոմի այն պալատներից մէկը գնելու մասին, որը հանդիսանում կոչված է Վատիկանին։ Պէտք է կարծել, որ Եգիպտոսի նախկին խէդիվի նոր պալատի կանաչ վարագոյրների հետևից թաքնված սև աչքերը խելքից կը հանեն Ս. Պետրոսի փոխանորդին չրջապատող շատ արեղաներին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մայիսի։ Խորհուրդները գիւղացիների հողերը յետ գնելու համար վճարքի փոքրացնելու մասին կըսկսվեն յունիսի 20-ին։ Այդ խորհուրդներին մասնակցելու համար մինիստր Իգնատիեվ Մոսկվայից հրաւիրել է Մոսկվայի Նահանգական զեմստվոյի վարչութեան նախագահ Նաուումովին, նոյնպէս իշխան Շչերբատով և Դմիտրի Սամարին ձայնաւորներին։

ԿԱՆԴԱՀԱՐ, 28 մայիսի։ Էմիրի զօրքերը կատարելապէս ջարդեցին Գիրիշկի մօտ Էյուբ-խանի կուսակիցների հրամանատարութեան տակ եղած զօրքերին, որոնք կազմված էին անկանոն հետևակ և հեծելազօրքից։ Կռիւը չորս ժամ էր շարունակվում։ Կօրուսների քանակութիւնը դեռ յայտնի չէ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 մայիսի։ „Голосъ“ լրագրի հաղորդութիւնը Սարատովի մէջ կատարված անկարգութիւնների մասին պաշտօնապէս հերքվում է։

ԿՕՐԿ, 29 մայիսի։ Ժողովրդի և պոլիցիայի մէջ փողոցային կռիւ պատահեցաւ, որ տևում էր մինչև գիշեր։ Շատ վիրաւորվածներ կան։

ԼԻՎԵՐՊՈՒԼ, 29 մայիսի։ Այստեղ յայտնվեցաւ, որ փորձ է եղել վառօդով ճայթեցնել քաղաքային փարչութեան տունը։ Շինութեան մի մուտքը վնասված է։ Կալանաւորված են երկու իրլանդացիներ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 62 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 94 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 5 կ., երկրորդ 218 ր. 5 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 93 ր. 5 կ., ոսկի 8 ր. 75 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 24,53 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 209 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 258 ֆրանկ 75 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ